



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար



Ա. Մելքոնյան
(անուն, ազգանուն)

ապրիլի 2019 թ.

N 2-ԿՀ հրաման

**Հիմք Հավատարմագրման ազգային
մարմնի հավատարմագրման խորհրդի**

2019 թվականի ապրիլի 19 -ի

N 1/1 որոշումը

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ՄՏԱՆԴԱՐՏԻ
ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
P-01-01**

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Նազիկ Արզարյան

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը 19.04.2019 թ.

Երևան 2019

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 ՍՏԱՆԴԱՐՏԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտից ՀԱՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտին
անցնելու ժամանակաշրջանի սահմանումը

1. Հայաստանի Հանրապետության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 101-Լ հրամանով ՀՀ-ում ընդունվել է ISO/IEC 17025:2017 միջազգային ստանդարտին նույնական «ՀԱՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 Փորձարկման և տրամաչափարկման լաբորատորիաների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ» ազգային ստանդարտը, գործարկման թվականը՝ 01.05.2019թ. :

2. Փորձարկման և տրամաչափարկման լաբորատորիաների իրազեկության գնահատումը ՀԱՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտի պահանջներին համապատասխան իրականացվելու է ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման 1-ին կետով հաստատված Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգի համաձայն:

3. Գնահատման դրական արդյունքների դեպքում հավատարմագրման վկայագիրը վերաձևակերպվում է՝ համապատասխանեցնելով ՀԱՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտի պահանջներին՝ հավատարմագրման ժամկետը սահմանելով մինչև հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը:

**«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ-Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ՍՏԱՆՂԱՐՏԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ**

1. Սույն քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել (էլեկտրոնային և/կամ պաշտոնական կայքէջի միջոցով) բոլոր հավատարմագրված փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներին՝ **մինչև 08.05.2019թ.**:

2. Հավատարմագրման փորձագետների (գնահատողների) համար կազմակերպել դասընթաց՝ ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտի պահանջներին համապատասխան, **մինչև 01.06.2019թ.**:

3. **01.06.2019թ.-ից** չընդունել ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտի պահանջներին համապատասխան հավատարմագրման հայտեր:

4. ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտի պահանջներին համապատասխան գնահատման աշխատանքները պետք է ավարտվեն **մինչև 01.11.2020թ.**:

5. **01.11.2020թ.-ից** հետո դադարեցնել ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտի պահանջներին համապատասխան հավատարմագրված փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաների հավատարմագրման վկայագրերի գործողությունը:

**ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՏՐԱՄԱԶԱՓԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ՍՏԱՆՂԱՐՏԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ**

1. ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտի պահանջները ներդրնելու նպատակով «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ից ձեռք բերել ստանդարտի պաշտոնական հրատարակությունը:

2. Մշակել ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտին անցնելու Պլանը, որը պետք է ներառի ժամկետների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

- գործող կառավարման համակարգի և ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտով սահմանված կառավարման համակարգի միջև համեմատական վերլուծության իրականացումը՝ ներառյալ կառավարման համակարգի փաստաթղթերը լրամշակելու

համար ուղղիչ գործողությունները՝ ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018-ի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով,

- փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաների փորձագետների ուսուցումը՝ ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտի պահանջներին համապատասխան և ուսուցման վերաբերյալ գրառումները,

- փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիայի կողմից ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտի պահանջների ներդնման գործընթացի ավարտման ժամկետի սահմանումը:

3. «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ-ին տրամադրել ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտին անցնելու Պլանի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը՝ **ոչ ուշ քան 29.12.2019թ.:**

4. Սույն քաղաքականության գործողության ժամկետը՝ **մինչև 01.11.2020թ.:**

5. Սույն քաղաքականության վերանայումը կատարվում է ըստ անհրաժեշտության: